ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« » « » 2010Թ. N - Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՃՇԳՐՏՄԱՆ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի հ.609-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետով, հաշվի առնելով շահագրգիռ պետական մարմինների եզրակացությունները, ինչպես նաև հասարակական քննարկման արդյունքները՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Հավանություն տալ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտման լրամշակված տեխնիկական առաջադրանքին՝ համաձայն հավելվածի։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
«…»…….. 2010թ. h.....Ա որոշման

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Օբյեկտի անվանումը. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտում:

Համայնքի անվանումը. Քաղաք Երևան:

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետ:

Մշակման ժամկետ՝ Նախագծի մշակման ավարտը՝ 10.12.2010 թ:

Նախագծման հիմքը՝ Երևանի քաղաքապետի 18.01.2010թ. N 74-Ա որոշում

Նախագիծը մշակվում է. Սույն առաջադրանքի համապատասխան՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2–ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի մշակման փորձաքննության, համաձայնեցման հաստատման ու փոփոխման մասին» N 609-Ն որոշմամբ հաստատված կարգի:

Տարածք՝ Վարչական սահմանները՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Բնակչություն՝ 1 200 հազ. մարդ, ըստ 2005-2020թթ. գլխավոր հատակագծի նախագծում սահմանված և հեռանկարային տարաբնակեցման ծրագրերում հաշվարկված ժողովրդագրական պոտենցիալի թույլատրելի առավելագույն թվի:

Ելակետային տվյալները՝ հավաքագրվում են նախագծող կազմակերպության կողմից Պատվիրատուի աջակցությամբ ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 2-ի h.609-Ն որոշմամբ հաստատված կարգի հավելված 2-ով պահանջվող կազմով և նախագծի ճշգրտման համար անհրաժեշտ հետևյալ տվյալները.

- Երևան քաղաքի 2005-2020թթ. Գլխավոր հատակագծի նախագիծը և 2009թ. կատարված Երևան քաղաքի 2005-2020թթ. Գլխավոր հատակագծի իրականացման վերլուծության աշխատանքների արդյունքում մշակված վերլուծական նյութերը:
- Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 7-ի «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի /2006-2020թթ./ իրականացման հիմնական միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» h.1402-Ն որոշմամբ հաստատված ծրագրի՝ 2005-2009թթ. ընկած ժամանակահատվածում մշակված Երևանին և Երևանի ագլոմերացիային վերաբերող նախագծերն ու ծրագրերը:
- Տվյալներ՝ քաղաքի ենթակառուցվածքների փաստացի վիճակի վերաբերյալ և քաղաքի շրջակա միջավայրի բաղկացուցիչ մասերի բնութագիրը առ 01.01.2010թ., Երևանի տնտեսական զարգացման հիմնական ուղղություններն ու

կանխատեսումները /քաղաքապետարանի, Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների տվյալները/, Գլխավոր հատակագծի մշակման համար անհրաժեշտ այլ տվյալներ և հետազոտությունների ու վերլուծությունների արդյունքներ:

- 1:2000, 1:10000 մասշտաբների քաղաքի արդիականացված տոպոգրա ֆիկ քարտեզները և կոորդինատների ընդունված ցանցում 2009-20010թթ. քաղաքի և քաղաքամերձ գոտու տիեզերական հանույթը:
- ՀՀ կառավարության 2009թ. դեկտեմբերի 24-ի N1517-Ն որոշմամբ Երևանի քաղաքային համայնքին քաղաքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերը համայնքային սեփականության իրավունքով անհատույց փոխանցելուց ստացված տվյալները:
- Քաղաքի արդիականացված կադաստրային քարտեզը, քաղաքի և նրա վարչական շրջանների հողային հաշվեկշիռը, հողօգտագործման սխեմաները, քաղաքի վարչական սահմանների կոորդինատները:
- Քաղաքի հերթապահ քարտեզի, իրականացված հողահատկացումների, ճարտարապետանախագծային առաջադրանքների և համաձայնեցված ու կառուցվող գլխավոր հատակագծերի վերաբերյալ տվյալները:
- Ինժեներաերկրաբանական, հիդրոերկրաբանական, տեկտոնական պայմանների նյութերը, իրականացված հողահատկացումների գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի տվյալները:

Նախագծի կազմը

Գլխավոր հատակագծի ճշգրտման աշխատանքներն իրականացվում են քաղաքի հաստատված Գլխավոր հատակագծի /2005-2020թթ./ նախագծի բովանդակության կառուցվածքին համապատասխան՝ ճշգրտման ենթակա ծավալների չափով:

Աննշան փոփոխությունների դեպքում բացատրագրում բերվում են ցուցումներ Գլխավոր հատակագծի դրույթների պահպանման անհրաժեշտության և հնարավոր շեղումների վերաբերյալ:

Անցած ժամանակահատվածում անփոփոխ մնացած բնական պայմանների ու պաշարների վերաբերյալ բաժինները ու գլխավոր հատակագծի դրույթները վերանայման ենթակա չեն:

Նախագծի մոտավոր բովանդակությունը

Թողարկվող նախագծի կազմում ընդգրկվում են տեքստային մասը և գրա ֆ իկական նյութերը:

Բացատրական մաս

Հաշվի առնելով Երևանի գլխավոր հատակագծի հաստատումից հետո տեղի ունեցած քաղաքի սահմանների, հողային ֆոնդի, սոցիալ-տնտեսական զարգացման և գերակայությունների որոշակի փոփոխությունները և հիմք ընդունելով **Հայաստանի Հանրապետության 2009 թվականի ապրիլի 9-ի** «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի N 478

որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 356-Ն որոշման 1-ին կետը՝ ճշգրտման ենթակա բաժիններն են հանդիսանում.

- աշխատանքի արդիականությունը, մշակման հիմքը, նպատակն ու խնդիրները,
- քաղաքի դիրքը տարաբնակեցման համակարգում,
- հողային պաշարներն ու տարածքի օգտագործումը,
- ինժեներաերկրաբանական ու սեյսմիկ պայմանները,
- հատակագծային սահմանափակումները,
- սոցիալ-տնտեսական զարգացման նախադրյալներն ու գերակայությունները,
- քաղաքի հատակագծային կազմակերպումը,
- տարածքների գոտիավորումը և ռեզերվացումը,
- կանաչապատման համակարգը,
- տրանսպորտը և ճանապարհափողոցային ցանցը,
- տեխնիկատնտեսական ցուցանիշները,
- առաջարկություններն ու եզրակացությունները:

Հաշվի առնելով վերոնշված բաժիններում կատարված ճշգրտումները, արդեն մշակված և հաստատված գոտիավորման նախագծերը, ինչպես նաև 2009թ կատարված Երևան քաղաքի 2005-2020թթ. Գլխավոր հատակագծի իրականացման վերլուծության աշխատանքների արդյունքում մշակված առաջարկությունները, անհրաժեշտության դեպքում մասնակիորեն լրացվում են մյուս բաժինները, այն է.

- բնակելի շինարարություն,
- սոցիալական և կոմունալ սպասարկման համակարգ,
- քաղաքի կենտրոնի ծավալատարածական հորինվածքն ու գոտիավորումը,
- քաղաքի ինժեներական ենթակառուցվածքներ,
- քաղաքի ինժեներական պաշտպանություն,
- քաղաքի շրջակա միջավայրի պաշտպանությանը նպատակաուղղված միջոցառումներ,

Գրա ֆ իկական նյութերը թողարկվում են հետևյալ կազմով.

- Քաղաքի ու քաղաքամերձ գոտու դիրքը տարաբնակեցման համակարգում, Մ1:100000,
- Հատակագծային սահմանափակումների սխեմա, Մ1:10000,
- Հենակետային հատակագիծ, Մ1:10000,
- Հողերի օգտագործման և գոտիավորման սխեմա, արդի վիճակ ու նախագիծ, Մ1:10000,
- Գլխավոր հատակագիծ /Հիմնական գծագիր/, Մ 1:10000,
- Մայրուղիների, քաղաքային և արտաքին տրանսպորտի սխեմա, Մ 1:10000
- Քաղաքի ինժեներական սարքավորումների սխեմա, Մ 1:10000,
- Քաղաքի շրջակա միջավայրի արդի և կանխատեսվող վիճակների սխեմա, Մ1:10000,
- Քաղաքի կանաչապատման սխեմա, արդի և կանխատեսվող վիճակներ, Մ1:10000,
- Քաղաքի տարածքի ինժեներական պաշտպանության սխեմա, Մ 1:10000,
- Ցուցադրական նյութեր՝ պլանշետների վրա և էլեկտրոնային տարբերակով:

«Երևան քաղաքի մինչև 2020թ. գլխավոր հատակագծի ճշգրտում» աշխատանքը ենթակա է համալիր փորձաքննության:

Աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ պայմանները

Երևան քաղաքի Գլխավոր հատակագծի ճշգրտման անհրաժեշտ պայմանն է սահմանափակ օգտագործման քարտեզագեոդեզիական գաղտնի նյութերից ու փաստաթղթերից օգտվելու համար համապատասխան թույլտվության առկայությունը:

Ներկայացվում է աշխատանքի էլեկտրոնային տարբերակը:

Երևանի քաղաքապետ *Գ. Բեգլարյան*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտման նախագծի տեխնիկական առաջադրանքի հասարակական քննարկման

ք.Երևան

Երևանի քաղաքապետարան **13.04.10թ.**

Քննարկումը վարում էր Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ս.Դանիելյանը

Ներկա էին

Երևանի քաղաքապետարանի «Երևաննախագիծ» ՓԲԸ	*Ս.Օհանյան*	
Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետներ	*Մ.Հովսեփյան, Լ.Մկրտչյան*	
«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»	*Մերի Խաչատրյան*	*հեռ.58-78-64, mary_rubens@yahoo.com*
«Էկոլուր» ՀԿ-ի նախագահ	*Ինգա Զարաֆյան*	*091/92-12-64, www.ecolur.org, info@ecolur.org*
«Էկոլոգիական հասարակական դաշինք»	*Միլվա Ադամյան*	*28-15-02,094/ 87-40-70*
Հայկական տեխնոլոգիական Ակադեմիա	*նախագահ՝Վանուշ Դավթյան, Լալա Թևոսյան*	
«ԲԿԱՄ» ՀԿ նախագահ	*Ա.Սարգսյան*	*093/ 82-72-17*
«Սպառողների ասոցիացիա» ՀԿ	*Արմեն Պողոսյան*	*56-11-47*
ՀՀ բնապահպանության նախարարություն, Երևանի «Օրհուս» կենտրոն	*Գեննադի Կոջոյան, Միլվա Այվազյան*	*091/ 51-22-06,*
«Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն	*նախագահ՝ Սոնա Այվազյան, Լենա Նազարյան*	*091/ 70-79-85, 091/43-32-78*
«Նոյի զավակները» ՀԲՆ	*Վազգեն Պետրոսյան*	*091/ 36-44-56*
«Новое Время» թերթ	*Էդուարդ Գասպարյան*	*077/ 11-66-06*
Ճարտարապետ	*Սարհատ Պետրոսյան*	*093/ 77-66-55*
«Երևաննախագիծ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ		*58-05-61*
գլխավոր հատակագծի բաժնի պետ	*Պետրոս Սողոմոնյան*	
գլխավոր հատակագծի բաժնի ճարտարապետներ	*Ա.Ալոյան, Զ.Մամյան, Ա.Մանասյան*	
գլխավոր հատակագծի բաժնի տնտեսագետ	*Լ.Կոջոյան*	*091/05-01-93*
գլխավոր հատակագծի բաժնի ճարտարագետ, տրանսպորտի մասնագետ	*Է.Ստեպանով*	

Ներկա էին նաև լրատվական ծառայությունների ներկայացուցիչներ:

ՀՆՉԵՑԻՆ ՀԱՐՑԵՐ

Արմեն Պողոսյանի, Մերի Խաչատրյանի, Ինգա Զարաֆյանի, Սոնա Այվազյանի, Սարգսյանի, Սահրատ Պետրոսյանի կողմից բարձրացված հարցերին պատասխանեցին Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ս.Դանիելյանը և «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի տնօրեն Ս. Օհանյանը:

Տրվեցին համապատասխան բացատրություններ գլխավոր հատակագծի ճշգրտման անհրաժեշտության վերաբերյալ:

Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ս. Դանիելյանի կողմից տրվեցին պարզաբանումներ

ՀՀ Կառավարության 15.12.2005թ. N2330-Ն որոշմամբ հաստատվել և 2006թ-ից գործողության մեջ է դրվել Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, որով նախանշված են քաղաքի զարգացման հեռանկարները մինչև 2020 թվական: ՀՀ կառավարության 2006թ. որոշմամբ ընդունված գլխավոր հատակագծի իրացման միջոցառումների ծրագրին համապատասխան իրականացվել են մի շարք աշխատանքներ: Մասնավորապես 2006-2008 թվականների ընթացքում մշակվել են գոտիավորման նախագծեր Կենտրոն, Արաբկիր, Աջափնյակ, Նորք-Մարաշ, Դավթաշեն և Շենգավիթ թաղային համայնքների և քաղաքի առանձին տարածքների համար (Տիչինայի փողոցին հարակից, Մարս գործարանին հարակից, էրեբունի, Ավան, Մալաթիա-Սեբաստիա համայնքներում) և այլ ծրագրային փաստաթղթեր:

2006թ.-ից յուրաքանչյուր տարվա համար իրականացվել է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրացման միջոցառումների մոնիտորինգի աշխատանքներ: Ամփոփելով անցած տարիներին կատարված աշխատանքները, ինչպես նաև ելնելով 2009թ. ընթացքում իրականացված գլխավոր հատակագծի վերլուծության արդյունքներից, առաջացել է լրամշակումների անհրաժեշտություն, ինչը պետք է կարգավորվի գլխավոր հատակագծի մակարդակով:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արմեն Պողոսյան - *«Սպառողների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ*

Առաջադրանքում ճշգրտումների համար անհրաժեշտ տվյալների ցանկում նշված ինժեներական, հիդրոերկրաբանական, տեկտոնական պայմաններին վերաբերող նյութերից, կարծում եմ, ավելի կարևոր են սեյսմաշրջանացման քարտեզները, որոնց մասին նշված չէ:

Պետրոս Սողոմոնյան - *«Երևաննախագիծ» ՓԲԸ-ի գլխավոր հատակագծի բաժնի պետ*

Առաջարկում եմ առաջադրանքով սահմանված նախագծի ավարտի 10.12.2010թ. ժամկետը վերանայել /այն դարձնելով տարանցիկ/, քանի որ այսպիսի քննարկումների, հետագայում նաև մրցույթի կազմակերպման հետևանքով ընթացիկ հարցերի վրա ժամկետ կորցնելով կրկնակի կրճատվում է մրցույթից հետո նախագծման համար մնացող ժամանակահատվածը:

Ա.Սարգսյան - *«ԲԿԱՄ» ՀԿ նախագահ*

Առաջարկում եմ այս աշխատանքով նոր լուծումներ նախատեսել Երևան քաղաքի կոմունիկացիոն խնդիրների ուղղությամբ:

Սահրատ Պետրոսյան - *ճարտարապետ*

Առաջադրանքում ամրագրված է կետ, որ ճշգրտման կարող են ենթարկվել կենտրոնի ծավալատարածական հորինվածքը և գոտիավորումը, ինչի կարիք չկա գլխավոր հատկագծի շրջանակներում, քանի որ գոտիավորման նախագիծը հանդիսանում է առանձին ծրագրային փաստաթուղթ:

ՈՐՈՇԵՑԻՆ

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտման նախագծի տեխնիկական առաջադրանքի նախագիծը լրամշակել՝ հաշվի առնելով վերոհիշյալ առաջարկությունները և սահմանված ընթացակարգերին համապատասխան ներկայացնել Երևան քաղաքի ավագանու քննարկմանը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Տեղեկանք

Երևան քաղաքի Գլխավոր հատակագծի ճշգրտման տեխնիկական առաջադրանքի նախագծի վերաբերյալ շահագրգիռ կազմակերպությունների առաջարկությունների և դիտողությունների մասին

(մեր 15.02.2010թ. N01/50-796 գրությանն ի պատասխան)

h/h	Դիտողության,առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը և համարը	Դիտողություններ, առաջարկությունների բովանդակությունը	Պարզաբանում
1	2	3	4
1.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն (25.02.2010թ. N 03/16/1134-10)	• Առաջարկում ենք հստակեցնել հավաքագրման ենթակա ելեկտրային տվյալների ցանկը , քանի որ ներկայացվող տեսքը հետագայում կարող է տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տալ: • Նույն բաժնում առաջարկում ենք հանել . «դրանց բացակայության դեպքում կօգտագործվեն ավելի վաղ ցուցանիշներ ՝ մինչև 2009թ. ավարտը եղած փորձագիտական գնահատականով» բառերը, դրանով իսկ բացառելով հատակագծում ոչ արդիական ելակետային տվյալների ներառման հնարավորությունը:	• Առաջարկությունն ընդունվել է մասնակի: Հավաքագրման ենթակա ելակետային տվյալներն ընդգրկում են ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 2-ի հ.609-Ն որոշմամբ հաստատված կարգի հավելված 2-ի կազմը և նախագծի ճշգրտման համար անհրաժեշտ այլ տվյալները: • Առաջարկությունն ընդունված է: Կատարված են համապատասխան ճշգրտումներ տեքստում:
2.	Հ Հ քաղաքաշինության նախարարություն (19.03.2010թ. N01/11 – 2/785 -10)	• Վերնագիրը պետք է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի առաջադրանքի նախագիծ»: • Անհրաժեշտ է առաջադրանքում նախատեսել առանձին կետեր բնակչության հեռանկարային աճի չափորոշիչների գերազանցման, արդյունաբերական որոշ օբյեկտների՝ քաղաքի սահմաններից դուրսբերման և (կամ) վերապրոֆիլավորման, անհատական կառուցապատման բնակելի թաղամասերի (Ավան,Մալաթիա-Սեբաստիա և այլ վարչական շրջաններ) մեծամասշտաբ իրացումների վերաբերյա,. հիմնահարցեր, որոնք չեն նախատեսված գործող գլխավոր հատակագծով, սակայն ամրագրվել են հետագայում մշակված գոտիավորման նախագծերում:	• Առաջարկությունը չի ընդունվում: Կարծում ենք, որ առաջադրանքում ներկայացված վերնագիրն առավել ճիշտ է բնութագրում նախատեսվող աշխատանքների բնույթն ու բովանդակային էությունը, մասնավորապես՝ 2009թ-ին իրականացված վերլուծության հիման վրա, ինչպես նաև կախված առաջ եկած գործոններից ու ստեղծված նախապայմաններից Գլխավոր հատակագծի ճգրտման աշխատանքների իրականացում: • Առաջարկությունը ընդունվել է մասնակի Մինչև 2020թ. Երևանի բնակչության՝ 1.200 հազար մարդ հեռանկարային թիվը հիմնավորվել և ընդունվել է Երևանի Գլխավոր հատակագծում, համաձայնեցված է քաղաքի տարաբնակեցման գլխավոր հատակագծի հետ ու բխում է քաղաքի էկոլոգիապես օպտիմալ տարողունակությունից: Այն փոփոխման ենթակա չէ: Քաղաքի սահմաններից որոշ արտադրական օբյեկտների դուրս բերման ու վերապրոֆիլավորման և անհատական կառուցապատմամբ գոտիների մեծամասշտաբ իրացման խնդիրների վերանայման արդյունքում

			գոտիավորման նախագծերով արդեն իսկ սահմանված ցուցանիշների փոփոխման անհարաժեշտությունը կարող է ի հայտ գալ միայն ճշգրտման աշխատանքների մշակման ընթացքում, կախված երկարաժամկետ մակրոտնտեսական կանխատեսումներից:
3.	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե, (26.02.2010թ N 07-ԱԱ08/330)	Առարկություններ չունեն:	
4.	ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, (25.02.2010թ N19146-10)	Առարկություններ և առաջարկություններ չունեն:	
5.	ՀՀ ոստիկանություն (03.03.2010թ N35/301)	Առարկություններ և առաջարկություններ չունեն:	
6.	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, (02.03.2010թ ՈՇՄ-08/262)	Առարկություններ չունեն:	
7.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (01.03.2010թ N07-ԳԱ-09-917)	Տալիս է համաձայնությունը:	
8.	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն	Առ 25.03.2010թ. եզրակացությունները չեն ներկայացրել:	Գործող կարգի համաձայն նախագիծը համարվում է ընդունված:
(05.03.10թ. 01/50 – 1335 գրությանն ի պատասխան)			
1.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (16.03.2010թ. N05/12. 21/1109 - 10)	Առարկություններ և առաջարկություններ չունեն:	
2.	ՀՀ ֆինանսների նախարարություն (18.03.2010թ. N4/4 - Ե-3-1187)	Առաջարկություններ չունեն	
3.	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	Առ 25.03.2010թ. եզրակացություն չի ներկայացվել:	Գործող կարգի համաձայն նախագիծը համարվում է ընդունված:
4.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (14.04.2010թ. N 01-13/2768)	• Առաջարկում եմ տեխնիկական առաջադրանքում ներառել Երևան քաղաքի տրանսպորտային սխեմաների, ճանապարհաշինարարության, ինչպես նաև կապուղիների ցանցերի վերաբերյալ դրույթներ և վերջնական տարբերակը համաձայնեցնել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հետ:	• Առաջարկությունը չի ընդունվել: Առաջադրանքով նախատեսված նախագծի կազմի մեջ ընդգրկված ճշգրտման ենթակա բաժինների մեջ նախատեսված է «տրանսպորտ և ճանապարհային ցանց» ենթաբաժինը, որում քննարկվել են նշված հիմնախնդիրները: Վերջնական տարբերակի համաձայնեցում նախարարության հետ ՀՀ կառավարության 2003թ. 02.05թ. N609-Ն որոշմամբ հաստատված կարգով չի նախատեսված:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԱԳԾԻ ՃՇԳՐՏՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի մասին» հ.56-Ն որոշմամբ և Երևանի քաղաքապետի 2010 թվականի հունվարի 18-ի հ.74-Ա որոշմամբ սահմանվել է «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտում»-ն իրականացնել 2010 թվականին։

Հիշյալ աշխատանքն իրականացնելու նպատակով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի հ.609-Ն որոշմամբ հաստատված կարգով, կազմվել է նախագծման տեխնիկական առաջադրանքը, որին հավանություն է տրվել Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի փետրվարի 9-ի հ.65-Ա որոշմամբ։

Վերոնշված կարգին համապատասխան նախագծման տեխնիկական առաջադրանքի նախագիծը ներկայացվել է շահագրգիռ պետական կառավարման մարմիններին համաձայնեցման։

Նախագիծը լրամշակվել է, և սահմանված կարգով բնակչությունն իրազեկվել է դրա հասարակական քննարկման օրվա, ժամի և առաջադրանքի բովանդակությանը ծանոթանալու հնարավորության մասին։

2010թ. ապրիլի 13-ին տեղի է ունեցել նշված հասարակական քննարկումը, որի արդյունքներով լրամշակվել է առաջադրանքի նախագիծը և ներկայացվել է Երևան քաղաքի ավագանու հավանությանը քաղաքապետի կողմից հաստատելու համար։

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԱԳԾԻ ՃՇԳՐՏՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտման տեխնիկական առաջադրանքին հավանություն տալու մասին» որոշման ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների և /կամ/ լրացումների անհրաժեշտություն չի առաջանում։

Գ. Բեգլարյան